ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 մայիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

55
(3264)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

QR ԿՈԴԵՐԻ ՍԿԱՆԴԱԼԸ

Հայաստանում ապրանքների նույնականացման՝ QR կոդերով դրոշմավորման համակարգը թեեւ ներկայացվում է որպես ստվերի դեմ պայքարի, շուկայի թափանցիկության բարձրացման գործիք եւ ԵԱՏՄ շուկայում գործունեության պահանջ, սակայն այն դարձել է լրացուցիչ բեռ կամ «թաքնված հարկ» տնտեսվարողների համար. մի ընկերություն հարստանում է QR կոդերի տրամադրման արդյունքում: Գործարարները բողոքում են:

Հիշեցնենք, որ 2025 թվականի փետրվարին կառավարությունը հաստատեց QR կոդերով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ընդլայնված ցանկը՝ 74 անուն՝ ներառելով կաթնամթերք, մսամթերք, դեղորայք, վառելիք եւ այլ լայն սպառման ապրանքներ: Այսպիսով, համակարգը դառնում է համատարած եւ ազդում գրեթե բոլոր ոլորտների վրա:

Տեղեկացնենք, որ մինչ այս՝ դրոշմապիտակների ֆինանսավորումն իրականացնում էր պետությունը: 2024 թվականին, օրինակ, պետությունը վճարել է ավելի քան 5.1 միլիարդ դրամ՝ 1.357 միլիարդ դրոշմապիտակների համար: Նոր համակարգում այս ծախսը ամբողջությամբ տեղափոխվում է տնտեսվարողների վրա, բայց ավելի բարձր գնով:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ 2025 թվականին արդեն հայաստանյան բիզնես դաշտը գնել է շուրջ 1.3 միլիարդ QR կոդ՝ յուրաքանչյուրի համար վճարելով 2.5 դրամ: Ընդհանուր վճարումը կազմել է ավելի քան 3.25 միլիարդ դրամ, որը այս տարի շեշտակի մեծ է լինելու, քանի որ ապրանքների անվանացանկը ավելացել է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Երեւանում մայիսի 4-ին մեկնարկած Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի կադրերում Ադրբեջանի նախագահի սեղանին «Istisu» հանքային ջրի շիշն է դրված: Ապրանքանիշ, որը ադրբեջանական կողմը ներկայացնում է որպես Քելբաջարի աղբյուրներից ստացվող արտադրանք, մինչդեռ Քարվաճառը 2023-ից է անցել Ադրբեջանին Արցախի էթնիկ զտման հետեւանքով: 120.000 անօթեւան մնացած արցախահայերի նկատմամբ Ալիեւի երեկվա այս քայլը որակվում է որպես սադրանք, իսկ հայ ժողովրդի նկատմամբ՝ ագրեսիա: Reuters-ը գրում է, որ այդ զանգվածային արտահոսքը տեղի ունեցավ Ադրբեջանի գործողություններից հետո, իսկ տեղահանության հետեւանքները մինչ այժմ շարունակում են մնալ լուրջ քաղաքական վեճի կենտրոնում:



Մայիսի 4-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մեկնարկել է Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը, իսկ մայիսի 5-ին մայրաքաղաքում անցկացվում է նաեւ առաջին ԵՄ-Հայաստան գագաթնաժողովը: ԵՄ-ն ներկայացնում են Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիո Կոշտան եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, Հայաստանը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Պաշտոնական հաղորդագրություններով՝ հանդիպումները Երեւանում համախմբում են ավելի քան 40 առաջնորդների: Երեւանում անցկացվող ԵՄ գագաթնաժողովի ֆոնին Հայաստանի ընդդիմադիր ուժերի մեծ մասը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում քննադատեց այն փաստը, որ Հայաստանի ոչ մի ընդդիմադիր, անգամ եվրոպամետ եւ արեւմտամետ ուժերի ներկայացուցիչ, հրապարակային ընդունելություն կամ հանդիպում չի ունեցել եվրոպացի հյուրերի հետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Երեկ մեկնարկած Ազգային Ժողովի հերթական նիստերի օրակարգում ընդգրկվել է ՀՀ դատախազության գործունեության եւ քննչական կոմիտեի տարեկան հաղորդումը: Քննարկման է դրվելու ՀՀ դատախազության գործունեության մասին հաղորդումը. ընդհանուր հանցավորությունը նվազել է, սակայն մի շարք ծանր եւ հանրային մտահոգություն առաջացնող հանցատեսակներ զգալի աճ են արձանագրել: Ըստ հաղորդման՝ 2025 թվականին Հայաստանում գրանցվել է 40 հազար 722 հանցագործություն, ինչը նախորդ տարվա համեմատ 3,2 տոկոսով պակաս է: Նվազում է արձանագրվել նաեւ խուլիգանության դեպքերում. եթե նախորդ տարի գրանցվել էր 877 դեպք, ապա այս տարի այդ թիվը կազմել է 777: Սակայն ընդհանուր նվազման ֆոնին հատկապես մտահոգիչ է թմրամիջոցների ապօրինի շրջանառության կտրուկ աճը: Դեպքերի թիվը հասել է 4595-ի՝ մեկ տարվա ընթացքում ավելանալով 685-ով կամ 19,7 տոկոսով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՇԱՏ ՀԵՇՏ Է ՄԵՂԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼԸ»

ArmLur.am-ը զրուցել է (սկիզբը՝ նախորդ համարում) հոգեւոր տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանի հետ:

-Իրենք պառակտում են մտցնում եւ արժանի են նզովքի: Ձեր պատարագների վերջում ինչո՞ւ եք աղոթում Արցախ աշխարհի համար, պատերազմի կոչ անում:

- Մենք ոչ մի պատերազմի կոչ չենք անում: Այստեղ մեծ մոլորություն եւ խաբեություն կա: Պատարագամատույցում իրականում չի եղել այն հատվածը, որտեղ աղոթք է արվում Հայաստանի Հանրապետության համար: Այդ հատվածը ավելացվել է Առաջին հանրապետության տարիներին՝ պետականություն վերականգնելուց հետո: Մեր հին պատարագամատույցներում այդ մասը չկա: Հետագայում, երբ Արցախը ազատագրվեց, եկեղեցին նաեւ այդտեղ ավելացրեց Արցախը: Այսօր մենք աղոթում ենք նաեւ Արցախի համար՝ այդ ավելացված հատվածում: Մենք աղոթում ենք մեր պատմական հայրենիքի համար, որը հիմա զավթված է, մեր եկեղեցիների համար, որոնք այնտեղ են մնացել ու պղծվում են: Եւ, ի վերջո, արցախահայության համար: Չե՞նք աղոթելու արցախահայության համար:

- Մայր Աթոռը եւ հոգեւորականությունը մեղադրվում են, որ չեն կանխել աղանդավորության տարածումը Հայաստանում: Ի՞նչ եք կարծում:

- Շատ հեշտ է մեղավոր նշանակելը: Մարդիկ, որոնք իրենք Հայ եկեղեցու զավակ են, հաճախ ոչինչ չեն արել իրենց շրջապատում քրիստոնեական վկայություն տալու համար, բայց մեղադրում են եկեղեցուն: Եկեղեցու առաքելությունը միայն հոգեւորականի ուսերին չէ: Բոլորս ենք կոչված վկայելու Քրիստոսին: Այո, հոգեւորականը ունի ավելի մեծ առաքելություն՝ քարոզչություն, սուրբ խորհուրդների սպասարկում, հսկողություն: Աղանդավորությունը միշտ եղել է եւ կլինի, որովհետեւ «ցորենի մեջ միշտ կա մոլախոտ»: Մենք չենք կարող ունենալ իդեալական պատկեր: Օբյեկտիվ պատճառներից մեկը այն էր, որ մենք պատրաստ չէինք խղճի ազատության օրենքին եւ դռները լայն բացեցինք արտաքին միսիոներների առաջ: Սուբյեկտիվ պատճառներից մեկը՝ մենք չօգտագործեցինք Մայր Աթոռի եւ հոգեւորականության ներուժը լավագույն կերպով:

- Մայր Աթոռի եւ պետության հարաբերությունները հաճախ քննադատվում են: Ինչպե՞ս եք գնահատում դա:

- Հոգեւորականը միշտ դժվար իրավիճակում է: Նա երբեք չի կարող բոլոր կողմերին գոհացնել: Եթե մենք վախենանք ճշմարտությունը ասել, ապա կորցնում ենք խաչի խորհուրդը: Խաչը հենց այն պատճառով է, որ ճշմարտությունը բախվել է կեղծիքին, սերը՝ ատելությանը: Հոգեւորականը պետք է առաջնորդվի ճշմարտությամբ, նույնիսկ եթե դա իրեն կյանք արժենա:

- Ինչո՞ւ, լինելով առաջին քրիստոնյա պետություն, չենք դառնում այն «հոգեւոր Հայաստանը», որի մասին երազել են մեր մտավորականները:

-Մենք լսել չգիտենք եւ խոնարհ չենք: Մեր ականջը հաճախ խուլ է ճշմարտության հանդեպ:

- Չե՞ք կարծում, որ սատանան հաղթում է այս պայքարում:

- Ո՛չ: Սատանան չի հաղթում: Ավագ ուրբաթ օրը թվացյալ հաղթանակ էր, բայց կիրակի առավոտյան պարզվեց իրականությունը: Չի կարելի ասել, որ նա հաղթում է:

- Ինչո՞ւ է դեպի Աստված տանող ճանապարհը այդքան դժվար:

- Սա գոյաբանական հարց է: Մարդը ունի ընտրության հնարավորություն: Այդ ընտրության մեջ է ամբողջ գաղտնիքը: Աստված ցույց է տվել ճանապարհը՝ կյանք կամ կործանում: Բայց մարդը հաճախ ընտրում է հեշտ թվացող, բայց կեղծ ճանապարհը: Ադամն ու Եվան նույնպես ընտրեցին լսել արտաքին շշունջը, ոչ թե Աստծուն: Դա է մարդու փորձությունը՝ ճիշտ ընտրություն կատարել:

- Ի՞նչ է պետք այսօր մեր ժողովրդին:

- Մեր ժողովրդին պետք են առաջնորդներ՝ իմաստուն, ազնիվ, քաջ եւ նվիրված: Նահատակության գնով պատրաստ առաջնորդներ: Մենք նաեւ լավ կառավարման համակարգի կարիք ունենք: Դրա բացակայության պատճառով ենք շատ կորուստներ ունեցել, այդ թվում՝ Արցախը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՀՌՉԱԿԱԳԻՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստան-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովի շրջանակում նախագահական նստավայրում հյուրընկալել է Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտային եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենին:

Նախ տեղի է ունեցել դիմավորման պաշտոնական արարողություն, որի շրջանակում հնչել են ԵՄ եւ ՀՀ օրհներգները, կայացել է զինվորական քայլերթ: Հաջորդիվ տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի առանձնազրույցն Անտոնիու Կոշտայի եւ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ: Առանձնազրույցից հետո կայացել է ընդլայնված կազմով հանդիպումը:

Ողջունելով Եվրամիության պատվիրակությանը՝Նիկոլ Փաշինյանը նշել է. «Ինձ համար մեծ պատիվ է ողջունել ձեզ Երեւանում՝ Հայաստան-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովի շրջանակում: Այսօր մենք եւս մեր քայլով որակապես նոր մակարդակի ենք բարձրացնում Հայաստանի եւ Եվրամիության հարաբերությունները, եւ պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունը եւ Եվրոպական Միությունն անցկացնում են երկկողմ գագաթնաժողով»:

Վարչապետի խոսքով՝ Հայաստան-ԵՄ հարաբերություններում արդեն իսկ ձեւավորվել է այնպիսի ծանրակշիռ օրակարգ, որն առաջիկայում անհրաժեշտ է լինելու քննարկել հենց գագաթաժողովների մակարդակում՝ ունենալով նաեւ բավականին մանրամասն եւ ծավալուն աշխատանք, ինչը եւ մինչեւ հիմա արվել է: «Մենք, իհարկե, նեղ կազմով արդեն առիթ ունեցանք քննարկելու հարցերի բավական լայն շրջանակ եւ ուրախությամբ եմ արձանագրում, որ մեր օրակարգի բազմաթիվ հարցերի վերաբերյալ մենք ունենք ընդհանրական դիրքորոշումներ եւ ձեւավորված ըմբռնում: Սա նշանակում է, որ պատշաճ մթնոլորտ է առկա, որպեսզի մենք կենտրոնանանք օրակարգի իրականացման, իրագործման վրա», -ասել է վարչապետը:

ՄԱԿՐՈՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՃԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը այցելել է Երեւանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Այցից հետո Ֆրանսիայի նախագահը իր սոցիալական հարթակներում հրապարակել է լուսանկար եւ գրառում՝ ընդգծելով հիշողության եւ պարտականության կարեւորությունը: Մակրոնը նշել է, որ այս վայրում կանգնած է «հիշողության եւ պարտականության առաջ՝ անջնջելիի հանդիման»՝ հավելելով, որ յուրաքանչյուր անուն պետք է հնչի եւ չմնա մոռացության մեջ: Նա նաեւ ընդգծել է, որ Ֆրանսիան մշտապես կանգնած է հայ ժողովրդի կողքին՝ հարգանքով հիշելով Հայոց ցեղասպանության զոհերին եւ անդրադառնալով «խլված բազմաթիվ ճակատագրերին»: Մակրոնի ուղերձը վերահաստատում է Ֆրանսիայի պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հիշատակման եւ Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունների շարունակականության վերաբերյալ. «Վերադարձ հիշողության եւ պարտականության այս վայր՝ անջնջելիին հանդիման: Որպեսզի յուրաքանչյուր անուն արձագանք գտնի եւ մոռացության չմատնվի: Ֆրանսիան հավերժ կանգնած է հայ ժողովրդի կողքին լի հարգանքով առ ապրած ցեղասպանության հիշատակը եւ խլված բազմաթիվ կյանքերը»:

Ա. Վ.

ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ

Երեւանում կայացած Հայաստան-Եվրամիություն առաջին գագաթնաժողովի արդյունքներն ամփոփելով՝ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը ներկայացրել է համագործակցության հիմնական գերակայությունները՝ առանձնահատուկ շեշտադրելով վիզաների ազատականացման գործընթացը:

Նա հայտնել է, որ ԵՄ-ն արդեն ներկայացրել է վիզաների ազատականացման գործողությունների առաջին դրական առաջընթացի զեկույցը՝ ընդգծելով, որ Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել անցած ամիսների ընթացքում: Ֆոն դեր Լայենի խոսքով՝ կողմերը վստահ են, որ գործընթացը կշարունակվի հաջողությամբ՝ նպաստելով քաղաքացիների ազատ տեղաշարժին եւ երկկողմ կապերի խորացմանը:

ԵՄ հանձնաժողովի նախագահը նշել է, որ համագործակցությունը զարգանում է չորս հիմնական ուղղություններով՝ փոխկապակցվածություն, էներգետիկա, թվային ոլորտ եւ անվտանգություն:

Փոխկապակցվածության շրջանակում ստորագրվել է գործընկերության փաստաթուղթ, իսկ Հայաստանը դիտարկվում է որպես կարեւոր տրանսպորտային հանգույց՝ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության համատեքստում: ԵՄ-ն պատրաստակամություն է հայտնել աջակցել տարածաշրջանային տրանսպորտային ցանցերին եւ սահմանային ենթակառուցվածքների զարգացմանը:

Էներգետիկ ոլորտում նախատեսվում է ներդրումներ կատարել վերականգնվող աղբյուրների եւ էներգետիկ անվտանգության ամրապնդման ուղղությամբ՝ ներառյալ շուրջ 25 միլիոն եվրո ներդրում՝ տարածաշրջանային էլեկտրահաղորդման եւ կուտակիչ համակարգերի զարգացման համար:

Թվային ոլորտում ԵՄ-ն եւ Հայաստանը նախատեսում են խորացնել համագործակցությունը արհեստական բանականության եւ տեխնոլոգիական նորարարությունների ուղղությամբ՝ խրախուսելով եվրոպական ընկերությունների ներդրումները Հայաստանում:

Անվտանգության բաղադրիչում ֆոն դեր Լայենը նշել է ԵՄ-ի աջակցությունը Հայաստանի զինված ուժերին եւ հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու կարողությունների ամրապնդմանը՝ ընդգծելով ժողովրդավարական լեգիտիմության կարեւորությունը:

Վիզաների ազատականացման գործընթացից բացի, կողմերը պայմանավորվել են նաեւ զարգացնել սահմանների կառավարման համագործակցությունը, այդ թվում՝ FRONTEX-ի հետ նոր աշխատանքային պայմանավորվածությունների միջոցով:

Ընդհանուր առմամբ, ԵՄ-ն վերահաստատել է Հայաստանի հետ տնտեսական աջակցության եւ ներդրումների խորացման հանձնառությունը՝ ներառյալ «Դիմակայունություն եւ աճ» ծրագրի շրջանակում նախատեսվող մինչեւ 2.5 մլրդ եվրոյի ներդրումային ներգրավումը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԸՆԴՈՒՆԵԼ Է

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը մայիսի 5-ին ընդունել է Արաբական Միացյալ Էմիրությունների առաջադեմ գիտության եւ տեխնոլոգիաների հարցերով արտաքին գործերի նախարարի տեղակալ Օմրան Շարաֆին եւ Հայաստանում ԱՄԷ արտակարգ եւ լիազոր դեսպան Նարիման Ալ-Մուլլային: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ Անուշիկ Ավետյանը:

Ողջունելով հյուրերին՝ Գեւորգ Պապոյանը բարձր է գնահատել վերջին տարիներին տնտեսության ոլորտում ԱՄԷ-ի հետ ձեւավորված սերտ գործակցությունը:

Նախարարն ընդգծել է, որ Հայաստանը հետաքրքրված է ԱՄԷ-ից բարձրորակ ապրանքների եւ առաջադեմ տեխնոլոգիաների ներկրմամբ, ինչպես նաեւ ներդրումային ծրագրերի իրականացմամբ՝ տնտեսության արդիականացման նպատակով: Այս համատեքստում նշվել է, որ Հայաստանը բաց է էմիրաթական ներդրումների համար լոգիստիկայի, ենթակառուցվածքների, վերականգնվող էներգետիկայի, զբոսաշրջության, բարձր տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, արդյունաբերության եւ այլ ոլորտներում:

Անդրադարձ է կատարվել նաեւ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին, դրա առանձին բաղադրիչներին՝ ընդգծելով ծրագրի կարեւորությունը տարածաշրջանի խաղաղ եւ կայուն զարգացման համար:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԱՐԱՐԱՏԻՑ

Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան, ով գտնվում է Երեւանում՝ Հայաստան-ԵՄ առաջին գագաթնաժողովին մասնակցելու նպատակով, իր սոցիալական հարթակներում հրապարակել է լուսանկարներ Երեւանի տարբեր վայրերից, այդ թվում՝ Կասկադ համալիրից, որտեղ հստակ երեւում է Արարատ լեռը:

Լուսանկարներից մեկում Կոշտան երեւում է Կասկադի տարածքում՝ Երեւանի համայնապատկերով եւ Արարատ լեռան ֆոնին, որը վերջին օրերին դարձել է եվրոպական պատվիրակությունների այցերի հիմնական խորհրդանշական կադրերից մեկը:

Կից գրառմամբ նա շնորհակալություն է հայտնել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ այցը Երեւանում հյուրընկալելու համար:

Հիշեցնենք, որ գրել էինք, որ Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը նույնպես Երեւանից լուսանկար էր տարածել Արարատի ֆոնին: Նա գրել էր, որ շնորհակալ է Նիկոլ Փաշինյանին՝ Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը հյուրընկալելու համար՝ ընդգծելով, որ Եվրոպան «մեկ մեծ ընտանիք է» եւ միասնական է ընդհանուր արժեքների ու մարտահրավերների շուրջ:

Երեւանում անցկացվող գագաթնաժողովների շրջանակում եվրոպական առաջնորդները շարունակում են ակտիվ շփումները եւ քննարկումները՝ տարածաշրջանային անվտանգության, տնտեսական համագործակցության եւ Հայաստան-ԵՄ հարաբերությունների խորացման շուրջ:

Ա. Վ.

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

59 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ՊԱՐՏՔ, 1556 ԴՐԱՄ՝ ՀԱՇՎԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրած պաշտոնական հայտարարագրերը բավական խոսուն պատկեր են բացում ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Հրաչյա Սարգսյանի ֆինանսական վիճակի մասին:

Բանկային համակարգից պետական բարձր պաշտոնների հասած Սարգսյանը վերջին տարիներին զբաղեցրել է Երեւանի քաղաքապետի, վարչապետի խորհրդականի, իսկ այժմ՝ պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնները: Սակայն նրա պաշտոնական հայտարարագրերում առավել աչքի է ընկնում ոչ թե գույքային աճը, այլ կտրուկ ծանրացած վարկային բեռը:

2024 թվականի տվյալներով՝ Սարգսյանը հայտարարագրել է միայն 2017 թվականին ձեռք բերված՝ Երեւանի բազմաբնակարան շենքում համատեղ սեփականություն հանդիսացող բնակարան: Տրանսպորտային միջոց չի հայտարարագրվել:

Ամենաուշագրավը, սակայն, դրամական միջոցների պատկերն է. բանկային հաշիվներում տարեվերջին եղել է ընդամենը 1,556 դրամ, կանխիկ գումար չի հայտարարագրվել: Միեւնույն ժամանակ հանձնված եւ վերադարձված փոխառությունների ծավալը կազմել է 54,850,000 դրամ:

Նրա 2024 թվականի եկամուտները կազմել են 18,833,436 դրամ, որից 14,830,774 դրամը աշխատանքի վարձատրություն է պաշտպանության նախարարությունից, իսկ 4,002,662 դրամը՝ եկամտային հարկի վերադարձ:

Բայց ամենածանր թիվը վարկային պարտավորություններն են. ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը կազմել է շուրջ 59,172,087 դրամ:

Եթե հետ նայենք նախորդ տարիներին, պատկերը դառնում է ավելի կտրուկ:

2023 թվականին Սարգսյանի ընդհանուր եկամուտները կազմել են 67,709,595 դրամ, սակայն բանկային հաշիվների մնացորդը եղել է ընդամենը 35,847 դրամ: Կանխիկ գումար կրկին չի հայտարարագրվել: Այդ նույն տարում վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հասել է 60,945,081 դրամի, իսկ դրանց մարմանը ուղղված վճարումները կազմել են 14,299,083 դրամ:

2022 թվականին, երբ նա Երեւանի քաղաքապետն էր, հայտարարագրել է 6,240,000 դրամ կանխիկ գումար, տարեկան եկամուտները կազմել են 16,168,520 դրամ, իսկ վարկերի մնացորդը՝ 19,606,458 դրամ:

2021 թվականին կանխիկ միջոցները կազմել են 3,600,000 դրամ եւ 5,500 ԱՄՆ դոլար, տարեկան եկամուտները՝ 10,777,032 դրամ, իսկ վարկային պարտավորությունները՝ 17,768,790 դրամ:

Այսպիսով, պաշտոնական փաստաթղթերը ցույց են տալիս բավական կտրուկ միտում. եթե 2021-2022 թվականներին Սարգսյանի վարկային բեռը տատանվում էր 17-19 միլիոն դրամի սահմաններում, ապա արդեն 2023 թվականին այն թռիչքաձեւ հասել է մոտ 60 միլիոն դրամի եւ այդ մակարդակում պահպանվել նաեւ 2024-ին: Այլ կերպ ասած՝ պաշտոնյայի պարտքերը մի քանի անգամ աճել են, մինչդեռ հաշվային միջոցները գրեթե զրոյական են մնացել: 59 միլիոն դրամ պարտք եւ 1,556 դրամ բանկային հաշվին՝ սա է այն ֆինանսական պատկերը, որն այսօր արտացոլված է պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնական հայտարարագրում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆՏՐՎԵԼ Է ԿԲ ՆԱԽԱԳԱՀ

ԱԺ հաշվիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանն Ազգային Ժողովի մայիսի 5-ի հերթական նիստում հայտնել է, որ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահի պաշտոնում ընտրվելու համար խորհրդարանին էր առաջարկել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված Մարտին Գալստյանի թեկնածությունը:

Նարեկ Բաբայանի տեղեկացմամբ՝ ԱԺ 107 պատգամավորից գաղտնի քվեարկությանը մասնակցել է 69-ը: Քվեատուփում առկա է եղել 69 քվեաթերթիկ, անվավեր քվեաթերթիկներ չեն եղել: Մարտին Գալստյանի թեկնածությանը կողմ է քվեարկել 69 պատգամավոր:

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ

Ռուսաստանում քննարկվում է մարտական դրոնների աշխատանքի նոր մոտեցում, որը ենթադրում է հրաժարում արբանյակային նավիգացիայից: «Իզվեստիա»-ում հրապարակված հոդվածում ԿԲԱԼ-ի գլխավոր կոնստրուկտոր Դմիտրի Կուզյակինը նշում է, որ ժամանակակից անօդաչու սարքերը աստիճանաբար անցնում են մեքենայական տեսողության՝նավիգացիայի կախվածությունը Global Positioning System-ից, որի ազդանշանը կարող է կեղծվել:

Կուզյակինի խոսքով՝ այս տեխնոլոգիական շրջադարձը ոգեշնչված է Ingenuity մարսյան ուղղաթիռի փորձից, որը գործել է առանց GPS-ի՝ հիմնվելով տեսողական նավիգացիայի վրա: Նրա գնահատմամբ՝ եթե նախկինում GPS-ի խափանումը կարող էր լիովին շարքից հանել սարքը, ապա այսօր նման միջամտությունները դիտվում են որպես աննշան խոչընդոտ, որը համակարգիչը կարող է անտեսել:

Հիշեցնենք, որ NASA-ի տվյալներով՝ Ingenuity-ը Մարսում իրականացրել է 72 թռիչք՝անցնելով շուրջ 17 կմ: Թեեւ սարքը հետագայում կորցվել է մոլորակի ռելիեֆի առանձնահատկությունների պատճառով, նրա տեխնոլոգիաները դիտարկվում են ապագա առաքելությունների համար, այդ թվում՝ Մարսից հողի առաջին վերադարձի ծրագրերում:

ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ՀԵՐՔԵԼ ԵՆ

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության աղբյուրները հերքել են լրատվամիջոցների հաղորդագրությունները Հայաստանի հետ սահմանի բացման ամսաթվի մասին:

Անկարայի դիվանագիտական աղբյուրները նշել են, որ Հայաստանի հետ սահմանային անցակետի բացման ճշգրիտ ամսաթիվը դեռեւս որոշված չէ:

«Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման չորս տարի տեւող գործընթացի շրջանակներում մինչ օրս ձեռնարկվել են բազմաթիվ վստահության ամրապնդման միջոցառումներ, որոնք ներառում են տրանսպորտը, մշակույթը, առեւտուրը եւ կրթությունը: Սահմանային հարցի վերաբերյալ նախապատրաստական աշխատանքներ են տարվում նաեւ որոշումների արագ իրականացման նպատակով, եթե դրանք կայացվեն: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ մեր երկրի կողմից Հայաստանի հետ տարվող գործընթացը նոր թափ կստանա: Սահմանային անցակետերի բացման ժամանակացույց դեռեւս չկա», - նշել են Անկարայից:

Ավելի վաղ թուրքական թերթերից մեկը պնդել էր, թե Հայաստանի հետ սահմանային անցակետի բացումը նախատեսված է հունիսի 4-ին: Հրատարակության համաձայն՝ 1993 թվականից փակված հայ-թուրքական սահմանը կարող է վերաբացվել Հայաստանում խորհրդարանական ընտրություններից երեք օր առաջ: Թերթը նշել է, որ Օսմանյան կայսրության եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1918 թվականի հունիսի 4-ին, եւ անցակետի բացումը կարող է համընկնել այդ տարեդարձի հետ:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

ՊՆ ԳԵՆԵՐԱԼ ԱՐՏԱԿ ԲՈՒԴԱՂՅԱՆԻ ԳՈՐԾԸ ՎԵՐԱԲԱՑՎՈՒՄ Է

Իրավապահները վերաբացում են ՊՆ գեներալ Արտակ Բուդաղյանի նկատմամբ հարուցված քրեական գործը: Մասնավորապես, մեզ հասած տեղեկություններեի համաձայն՝ իրավապահները տեղեկություններ են ստացել, որ նրա դեմ ցուցմունք տված անձինք սուտ ցուցմունք են տվել: Փաստացի՝ 11 տարի առաջվա աղմկահարույց դեպքերը նոր ընթացք են ստանում:

2013 թվականի հունիսի 1-ի երեկոյան Գորիսի Դավիթ-Բեկի փողոցի թիվ 1 հասցեում գտնվող Սուրիկ Խաչատրյանի առանձնատան դիմացի հատվածում տեղի էին ունեցել կրակոցներ, ինչի հետեւանքով 1970թ. ծնված Ավետիք Բուդաղյանը (Գորիսի քաղաքապետի նախկին թեկնածու) ստացած հրազենային վնասվածքներից տեղում մահացել էր, իսկ 1971թ. ծնված Արտակ Բուդաղյանը եւ 1975թ. ծնված Նիկոլայ Աբրահամյանը հրազենային վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով եւ 235 հոդվածի 1-ին մասով:

ՀՀ կառավարության հունիսի 6-ի նիստում գործադիրը հավանության է արժանացրել Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հրաժարականի դիմումը: Ավելի ուշ որոշումը վավերացրել է նախագահ Սերժ Սարգսյանը:

Սպանված Ավետիք Բուդաղյանի եղբորը՝ N զորամասի հրամանատար, գնդապետ Արտակ Բուդաղյանին, մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել):

2015թ. օգոստոսի 21-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Արտակ Բուդաղյանին մեղավոր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի համար): Նրա նկատմամբ որպես պատիժ նշանակվել էր 120,000 դրամի չափով տուգանք:

Ակնհայտ էր, որ Արտակ Բուդաղյանի դեմ հարուցված քրեական գործը կապված էր 2013 թվականին Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի տան մոտ տեղի ունեցած հայտնի միջադեպի հետ, ինչի հետեւանքով սպանվել էր Արտակ Բուդաղյանի եղբայրը: Եւ ահա 11 տարի անց օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել, որ վկաները սուտ ցուցմունք են տվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ո՞Վ ԱՋԱՏՎԵՑ ՊԱՏԺԻՑ

2024 թվականին հայտնել էինք, որ ՀՀ քննչական կոմիտեն Կարինե Գեւորգի Հովհաննիսյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Երեւան քաղաքի Ավան Իսահակյան թաղամասի 10-րդ հասցեում գործող «Ալլադին Քիդս Քլաբ» մանկապարտեզի մաքրուհի, 2023 թվականի օգոստոսի 2-ից մինչեւ սեպտեմբերի 14-ը ներառյալ, նույն մանկապարտեզի տնօրեն Աննա Ռոմիկի Հարությունյանի հետ՝ խմբի կազմում, գիտակցելով եւ փոխլրացնելով միմյանց գործողությունները, մանկապարտեզ հաճախող անչափահաս սաներին պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ եւ հոգեկան ուժեղ տառապանք:

Նշենք, որ դեպքը եղել էր 2023 թվականի օգոստոսի 16-ին: Համացանցում տարածվել էր տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես են մանկապարտեզի տնօրենը եւ աշխատակիցները ծեծի ենթարկում երեխաներին: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ տեսանյութը նկարահանվել է «Ալլադին» մասնավոր մանկապարտեզում, որտեղ, ի դեպ, ամսական վարձավճարը կազմում է 90 հազար դրամ:

Եւ ահա դատարանի առաջ են կանգնել մանկապարտեզի տնօրենը եւ մաքրուհին: Արդյունքում դատարանը մանկապարտեզի մաքրուհի Կարինե Գեւորգի Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքում եւ պատիժ նշանակել ազատության սահմանափակում՝ 1 /մեկ/ տարի ժամկետով՝ 2 /երկու տարի ժամկետով զրկելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում աշխատելու իրավունքից: ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի կիրառմամբ Կարինե Գեւորգի Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված 1 տարի ժամկետով ազատության սահմանափակմանը հաշվակցել վերջինիս փաստացի անազատության մեջ գտնվելու 3 օր ժամանակահատվածը եւ վերջնական պատիժ թողնել կրելու ազատության սահմանափակում՝ 11 ամիս 27 օր ժամկետով: Իսկ մանկապարտեզի տնօրեն Աննա Ռոմիկի Հարությունյանը անմեղ է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով ներկայացված մեղադրանքում արարքն ապացուցված չլինելու հիմքով եւ դատարանի որոշմամբ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց բացակայելու արգելքը եւ դրանցով պայմանավորված սահմանափակումները վերացնել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեկ Երեւանում՝ Բագրատունյաց 13 հասցեում, կրակոցներ են հնչել: ArmLur.am-ը դեպքի վայրից հայտնում է, որ մեկ անձ սպանվել է:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, նշված վայրից հրազենային վնասվածքով հիվանդանոց է տեղափոխվել մի քաղաքացի, որտեղից կարճ ժամանակ անց ահազանգ է ստացվել ոստիկանության Շենգավիթի բաժին, որ վիրավորը, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի փաստով Շենգավիթի քննչական բաժնում «սպանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են դեպքի հանգամանքները, մահացածի եւ կրակոցներ արձակողի ինքնությունը, եւ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ հանցագործություն կատարած անձին եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

Ֆոտոլրագրողը հայտնում է, որ դեպքի վայրում հայտնաբերվել են արնանման հետքեր, ծխախոտ եւ այլ կասկածելի իրեր: Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին, որ մահացածը մոտ 40 տարեկան է, ում անունը Արտյոմ է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՓՐԿՎԵԼ ԵՆ

Անվտանգություն ապահովելու եւ քաղաքացիներին օգտակար լինելու հանձնառությամբ փրկարարներն ու ոստիկաններն ամեն օր պատասխանատու ծառայություն են իրականացնում՝ օպերատիվորեն արձագանքելով յուրաքանչյուր իրավիճակի: Խոսուն օրինակը ապրիլի 30-ին Հրազդանի կիրճում տեղի ունեցած դեպքն էր, երբ ոստիկանության գվարդիայի եւ փրկարարների արագ ու համակարգված գործողությունները վճռորոշ էին: Գվարդիայի ծառայողի խոսքով՝Հրազդանի կիրճում ծառայություն իրականացնելիս քաղաքացիների օգնության կանչեր են լսել եւ անմիջապես տեղեկատվությունը փոխանցել փրկարարներին: Իրավիճակը ճիշտ գնահատելու արդյունքում ոստիկաններին ու փրկարարներին հաջողվել է փրկել քաղաքացիներին:

Երեւանի փրկարարական վարչության թիվ 1 ՀՓՋ խմբի պետ Վահան Թունյանը նշում է, որ օպերատիվ արձագանքելով ահազանգին՝փրկարարները ժամանել են դեպքի վայր, որտեղ պարզվել է, որ գետի մակարդակի բարձրացման հետեւանքով 17-19 տարեկան չորս աղջիկներ արգելափակվել են կղզյակում եւ չեն կարողանում դուրս գալ:

Վտանգի գնահատումից հետո իրականացվել են անհետաձգելի փրկարարական աշխատանքներ. հրշեջ-փրկարարները, կիրառելով հատուկ նշանակության պարաններ եւ ամրակապման միջոցներ, մոտեցել են քաղաքացիներին, ցուցաբերել հոգեբանական աջակցություն եւ կազմակերպել նրանց անվտանգ տեղափոխումը գետի մյուս ափ: Գործողություններին ներգրավվել է նաեւ հատուկ նշանակության ջոկատը: Փրկարարական աշխատանքների արդյունքում բոլոր քաղաքացիները տեղափոխվել են անվտանգ տարածք:

ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Անձնական ունեցվածքի գողության վերաբերյալ հաղորդումը Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին ստացվել էր ապրիլի 30-ին: Ոստիկանություն դիմած քաղաքացին հայտնել էր, որ ապրիլի 28-ի ժամը 21-ից ապրիլի 29-ի ժամը 7-ն ընկած ժամանակահատվածում Ներքին Չարբախի 1-ին փողոցի հարակից դաշտից գողացել են իր 224 ոչխարը՝ պատճառելով մոտ 15 միլիոն դրամի վնաս:

Շենգավիթի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ նշված արարքը կատարել են 30 եւ 27 տարեկան երեք երիտասարդ: Հետագա միջոցառումների արդյունքում 30-ամյա երիտասարդը Նորագավիթի 6-րդ փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ իր կողմից շահագործվող «Հյունդաի Սոնատա» մակնիշի մեքենայով հանդերձ՝ տեղափոխվել է բաժին:

Գողոնը հայտնաբերվել է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողության մյուս մասնակիցներին հայտնաբերելու ուղղությամբ:

30-ամյա երիտասարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ ապրիլի 29-ից 30-ը ՀՀ-ում բացահայտվել է 147 հանցագործություն:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ՍՈՒՆԿԸ ՀԱՎԱՔԵԼ ԷԻՆ

Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցում, միջպետական ավտոճանապարհի եզրին գործում է սնկի վաճառքի անօրինական կետ: Երբ ծառի սնկի սեզոնն է լինում, այստեղ վաճառվում է անտառների ծառի սունկ, իսկ մնացած ժամանակ՝ շամպինիոն տեսակի եւ ծառի՝ արտադրական եղանակով աճեցրած սունկ: Սնկի վաճառքի կետը պատկանում է դրա դիմաց խանութ ունեցող դիլիջանցու, ով գերադասում է ոչ թե իր խանութում կամ այդ խանութի առաջ, այլ դրա դիմաց՝ փողոցի մյուս կողմում, սունկ վաճառել: Դիլիջանի համայնքապետարանը մի անգամ 100 հազար դրամով տուգանել է սնկի վաճառքի անօրինական կետի տիրոջը, սակայն նա շարունակում է այդտեղ սնկի վաճառքը: Դիլիջանի- բնակիչները հայտնեցին, որ ամեն անգամ, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դիլիջանով Տավուշի մարզ կամ Դիլիջան քաղաք է այցելում, նշված տարածքում վաճառվող սունկը հավաքում են, Փաշինյանի գնալուց հետո միջպետական ավտոճանապարհի եզրին սնկի վաճառքը նորից է սկսվում: Ապրիլի 26-ին Տավուշի մարզ իր այցելության ընթացքում Նիկոլ Փաշինյանը եղել է Դիլիջան համայնքում, ծանոթացել Թեղուտ գյուղից դեպի Հաղարծին տանող 2,5 կիլոմետր երկարությամբ հիմնանորոգված ճանապարհին, վերանորոգված Դիլիջան քաղաքի թիվ 5 մանկապարտեզին, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի Դիլիջանի մասնաճյուղին: Նիկոլ Փաշինյանի՝ Դիլիջան այցելության ժամանակ միջպետական ավտոճանապարհի եզրին գործող սնկի վաճառքի անօրինական կետը ժամանակավորապես փակվել էր, որպեսզի Փաշինյանի՝ Դիլիջանից հեռանալուց հետո նորից գործեր:

7-Ը՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻՑ

Պետական եկամուտների կոմիտեն հրապարակել է 2026 թվականի հունվար-մարտ ամիսներին 1000 խոշոր հարկատուների ցուցակը: Այդ ցուցակում տեղ են գրավել Տավուշի մարզում գործող մի քանի ընկերություններ: Ցուցակի 351-րդ տեղը զբաղեցնում է «Իջեւանի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ն: Ցուցակի 676-րդ տեղում Բերդ համայնքում արտադրական ձեռնոցներ արտադրող «Տավուշ տեքստիլ» ընկերությունն է: 1000 խոշոր հարկատուների ցանկի 731-րդ տեղում Դիլիջան քաղաքում շինարարական գործունեություն ծավալող «Սթրաքթ» ՓԲԸ-ն է: Ցուցակի 854-րդ տեղում «Մեր Հարությունյանն» է, իսկ 855-րդ տեղում՝ Դիլիջանի միջազգային դպրոցը: 885-րդ տեղում Դիլիջանում գարեջուր արտադրող «Հ եւ Տ Հակոբյաններ» ընկերությունն է: Ցանկի 963-րդ տեղում «Արվա պրոֆ» ընկերությունն է: Համացանցում որոնում տալով՝ պարզեցի, որ «Արվա պրոֆը» սանիտարահիգիենիկ ապրանքներ ներմուծող ընկերություն է, որի գործունեության հասցեն նշված է Մասիս քաղաքը: Համացանցում տեղեկություններ չգտա «Մեր Հարությունյանի» գործունեության մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԹՎԵՐ

ՀԱՍԵԼ ԵՆ ՏԱՄՆՅԱԿ ՄԻԼԻԱՐԴՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության դատախազության՝ 2025 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդման համաձայն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ աշխատանքները շարունակվել են ակտիվ տեմպերով՝ ընդգրկելով հարյուրավոր անձանց եւ բազմամիլիարդ դրամների պահանջներ:

Տվյալների համաձայն՝ տարվա ընթացքում դատախազության համապատասխան վարչությունում ստացվել է 146 զեկուցագիր՝ 180 անձի վերաբերյալ, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական մարմիններից՝ 22 տեղեկանք: Նյութերի ուսումնասիրության արդյունքում ընդունվել է 157 ուսումնասիրություն սկսելու որոշում, մինչդեռ 48 դեպքով որոշվել է ուսումնասիրություն չնախաձեռնել՝ հիմնականում ապօրինի գույքի նվազ շեմի կամ օրենքով նախատեսված այլ հիմքերի բացակայության պատճառով:

Հաշվետու տարում դատարան է ներկայացվել հայցի ապահովման միջոցների կիրառման 60 դիմում, որոնցից 47-ը բավարարվել է ամբողջությամբ: Միեւնույն ժամանակ, 44 ուսումնասիրությամբ կազմվել է վերջնական եզրակացություն, եւ դրանցից 42-ով դատարան են ներկայացվել բռնագանձման հայցեր:

Դատարան ներկայացված եւ քննվող 38 հայցերով պետությունը պահանջում է բռնագանձել 230 անշարժ եւ 68 շարժական գույք, ինչպես նաեւ մասնակցություն 76 իրավաբանական անձում: Միայն այդ գործերով դրամական պահանջը գերազանցում է 31,5 միլիարդ դրամը, իսկ ընդհանուր հայցագինը մոտենում է 36 միլիարդ դրամի:

Միեւնույն ժամանակ, 2025 թվականին դատարանների կողմից քննված գործերով կայացվել է 7 վճիռ, որոնցից միայն 2-ն են բավարարվել մասնակի, իսկ 5-ը մերժվել են: Դատախազությունը նաեւ կնքել է մեկ հաշտության համաձայնություն, որի արդյունքում պետությանը ենթակա է բռնագանձվել ավելի քան 87 միլիոն դրամ, որից տարվա վերջի դրությամբ արդեն վերադարձվել է շուրջ 65 միլիոնը:

Հատկանշական է, որ 2025 թվականին ուժի մեջ է մտել նաեւ ապօրինի գույքի բռնագանձման գործով առաջին վերջնական վճիռը, որի հիման վրա պետությանն են անցել Երեւանում եւ Կոտայքի մարզում գտնվող անշարժ գույքեր՝ շուրջ 300 միլիոն դրամ ընդհանուր արժեքով:

Ընդհանուր առմամբ, տարվա ավարտի դրությամբ դատարաններում քննվում է 155 հայց՝ շուրջ 595 միլիարդ դրամ ընդհանուր հայցագնով: Այս գործերով դատախազությունը պահանջում է բռնագանձել ավելի քան 1460 անշարժ գույք, հարյուրավոր շարժական գույքեր եւ մասնակցություն 440 ընկերություններում:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Տավուշի մարզի հանրակրթական շատ դպրոցների ցածր դասարանների աշակերտներին պետական բյուջեի ֆինանսավորմամբ անվճար սնունդ է տրվում: Մարզի շատ դպրոցներում աշակերտների ծնողներից ամեն ամիս մոտ 1000 դրամ են հավաքում, որպեսզի դրանով գնված ձեթով տված անվճար սնունդը մշակեն, նաեւ դպրոցների ճաշարաններում առկա ամանները լվացող հեղուկներ գնեն:



Բերդ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի նախկին տնօրեն, Բերդ համայնքի ավագանու անդամ Անահիտ Ջուլհակյանը լրագրողիս ասել է, որ այդ երեւույթը՝ դրամահավաքությունը, առկա է Տավուշի մարզի հանրակրթական շատ դպրոցներում: Սակայն տիկին Ջուլհակյանը իրենց դպրոցի աշակերտներից հավաքվող գումարի չափը նշել էր ամսական 650 դրամը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում դրամահավաքության դեպքերի մասին: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ մարզպետի աշխատակազմը մարզի դպրոցներում դրամահավաքության վերաբերյալ տեղեկատվություն չի ստացել:

Ապրիլի 18-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկատվական հարցում եմ արել. նա տեղյա՞կ է հանրակրթական դպրոցներում կատարվող դրամահավաքությունից, դա օրինակա՞ն գործընթաց է: Ստացել եմ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի ստորագրությամբ պատասխան, ուր նշված է. ««Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում ՀՀ մարզերի 1-4-րդ դասարանների սովորողներին տրամադրվում է անվճար սնունդ ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Դպրոցներում հավելյալ սնունդ, մաքրող միջոցներ կամ այլ նպատակով սովորողների ծնողներից դրամահավաք կազմակերպելու ցանկացած փորձ անհրաժեշտ է բացառել հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ինչ վերաբերում է գրությամբ նշված դրամահավաքության դեպքին, նախարարությունը դրա վերաբերյալ որեւէ տեղեկություն չունի»:

Առաջիկայում դպրոցական Վերջին զանգի արարողությունն է: Ավանդույթի համաձայն՝ հանրակրթական դպրոցների շրջանավարտները մեծ ծախսեր են կատարում այդ օրվա համար տոնական հագուստի, հանրակրթական դպրոցի տնօրենի, դասղեկի համար նվերներ գնելու, տեսանկարահանման եւ լուսանկարահանման, տոնական քեֆի համար: Սոցիալապես անապահով շատ ընտանիքներ գումար չունեն նման ճոխ ծախսերի համար, սակայն, թեկուզ պարտքով, այդ ծախսերն անում են իրենց շրջանավարտ երեխայի համար: Իսկ հանրակրթական դպրոցները անմիջականորեն ղեկավարող Տավուշի մարզպետի աշխատակազմը եւ ԿԳՄՍ նախարարությունը շարունակում են անտեսել հանրակրթական դպրոցներում դրամահավաքության փաստերը՝ արդարանալով, որ իրենք նման տեղեկատվություն չեն ստացել:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

● *Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝ 4 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության, 3 դեպք՝ խարդախության, 1 դեպք՝ շորթման:*

ԼՈՒՐԵՐ

10% CASHBACK

Արդշինբանկը մեկնարկել է նոր շահավետ պայմաններով արշավ իր Mastercard քարտապանների համար՝ ընդլայնելով անկանխիկ վճարումների հնարավորությունները:

2026 թվականի ապրիլի 27-ից մինչեւ մայիսի 27-ը ներառյալ Արդշինբանկի Mastercard քարտապանները կարող են օգտվել հատուկ առաջարկից՝ ստանալով 10% cashback գործընկեր ռեստորաններում իրականացված անկանխիկ վճարումների դիմաց:

Նախաձեռնությունը գործում է Երեւանում եւ զբոսաշրջային այլ ուղղություններում տեղակայված հետեւյալ ռեստորաններում՝ «Գինետուն» ռեստորան, «Յասաման» եւ «Սիռովարնյա» ռեստորանների ցանց: Cashback-ը տրամադրվում է նշված ռեստորաններում Արդշինբանկի Mastercard քարտերով բանկի POS տերմինալներով կատարված վճարումների համար: Վերադարձվող գումարը կազմում է գործարքի 10%-ը (ներառյալ հարկերը) եւ փոխանցվում է հաճախորդներին առաջարկի ժամկետի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում: Յուրաքանչյուր քարտի համար տրամադրվող cashback-ի հանրագումարային առավելագույն սահմանաչափը կազմում է 20,000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը):

Առաջարկը հասանելի է Արդշինբանկի բոլոր Mastercard քարտերի համար՝ բացառությամբ Mastercard Pension կենսաթոշակային քարտերի: Արդշինբանկի Mastercard քարտերը կարող եք պատվիրել՝ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արդշինբանկը շարունակում է ամրապնդել իր դիրքը որպես առաջատար ֆինանսական հաստատություն՝ համադրելով նորարարական լուծումները, հաճախորդակենտրոնությունը եւ շուկայի զարգացմանն ուղղված ռազմավարական նախաձեռնությունները:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: (Գ)

ԿԱՐՄԻՐԳՐՔՅԱՆ ՔՈԹՈԹՆԵՐ

2026թ. մայիսի 4-ին Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմին ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ջերմուկի բաժնից ստացվել է ահազանգ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում հայտնաբերված արջի 2 քոթոթի վերաբերյալ: Դեպքի վայրում պարզվել է, որ անօգնական վայրի կենդանիները ՀՀ Կարմիր գրքում գրանցված գորշ արջի մոտ մեկ ամսական քոթոթներ են: Արտաքին զննությամբ վայրի կենդանիների մոտ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Քոթոթների պատշաճ խնամքն ապահովելու եւ հետագայում նրանց վայրի բնություն վերադարձնելու նպատակով կենդանիները տեղափոխվել են Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) Ուրցաձորի կովկասյան կենսաբազմազանության ապաստարան:

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԸ՝ 280 ԴՐԱՄ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՍՏՈ՞ՒՄ ԷՐ

Մայիսի 1-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը վստահեցնում էր՝ մի քանի օրից հեղուկ գազի շուկայում իրավիճակը կկայունանա, մատակարարումները կվերականգնվեն, եւ գները կնվազեն: Սակայն մայիսի 5-ի դրությամբ իրականությունը բոլորովին այլ պատկեր է ցույց տալիս:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանում հեղուկ գազի մեկ լիտրի գինը շարունակում է պահպանվել շուրջ 280 դրամի սահմանում, մինչդեռ խոստացված «էական նվազումը» այդպես էլ տեսանելի չէ: Շուկան շարունակում է ապրել նույն լարվածությամբ, իսկ սպառողը՝ նույն բարձր գնով:

Նախարարի պարզաբանմամբ՝ խնդիրը կապված էր Վերին Լարսի անցակետում առաջացած խոչընդոտների հետ: Ըստ նրա՝ ռուսական կողմում կուտակված գազատար մեքենաները վատ եղանակի պատճառով չէին կարողանում անցնել, սակայն ճանապարհի բացումից հետո բեռնատարները սկսել էին շարժվել դեպի Հայաստան: Այդ ֆոնին հնչեցրել էր հստակ կանխատեսում՝ ուրբաթ կամ շաբաթ գազի քանակը բավարար կլինի, եւ գները կիջնեն: Բայց անցել են օրեր, իսկ շուկայում ոչինչ չի փոխվել:

ArmLur.am-ի հետ զրույցում ՀՀ էկոնոմիկայի նախարարի խոսնակ Լիլիթ Շաբոյանը փաստացի արձանագրել է այն, ինչ սպառողներն արդեն զգում են իրենց գրպանի վրա՝ պետությունը գնի ձեւավորման վրա ազդեցություն չունի:

«Մենք որեւէ միջամտելու իրավասություն չունենք, քանի որ շուկայական հարաբերություններն են ձեւավորում գինը»,- նշել է նա:

Այս հայտարարությունը, սակայն, նոր հարցեր է առաջ բերում: Եթե պետությունը նախապես հայտարարում է գների նվազման մասին, ապա ինչի՞ վրա էր հիմնված այդ վստահությունը: Եթե շուկան ինքնուրույն է կարգավորում գինը, ապա ինչո՞ւ էր հանրությանը փոխանցվում շուտափույթ էժանացման ակնկալիք:

Պաշտոնական պարզաբանմամբ՝ հեղուկ գազի դեֆիցիտի պատճառը երկու ուղղությամբ է՝ Իրանից ներմուծման դադարեցում՝ Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակի հետեւանքով, եւ Վերին Լարսի անցակետի ժամանակավոր փակումը: Սակայն հիմա, երբ Լարսը բաց է, բեռնատարների շարժը վերականգնված է, իսկ ռուսական կողմի հետ, նախարարության հավաստմամբ, աշխատանքային հարաբերությունները կայուն են, շուկայում սպասված թեթեւացումը դեռ չկա:

Փաստը մնում է փաստ՝ իշխանությունը խոսեց գների անկման մասին, բայց սպառողը շարունակում է վճարել նույն 280 դրամը:

Այս պատմության մեջ ամենասուր հարցը մնում է անպատասխան՝ եթե խնդիրը լուծված է, ապա ինչո՞ւ հեղուկ գազը Հայաստանում դեռ շարունակում է մնալ թանկ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ FTSE 100-ՈՒՄ

Lion Finance Group-ը (LFG) ազդարարեց իր ընդգրկումը FTSE 100 ինդեքսում՝ շուկայի փակումից հետո հնչեցնելով Լոնդոնի ֆոնդային բորսայի զանգը:



Ամերիաբանկը՝ որպես LFG խմբի մաս, 2026թ. մարտին ներառվել է աշխարհի առաջատար բորսաներից մեկի FTSE 100 ինդեքսում՝ դառնալով առաջին հայկական ընկերությունը, որն ընդգրկվում է Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված 100 խոշորագույն ընկերությունների շարքում:

Լոնդոնի ֆոնդային բորսայի զանգի հնչեցման արարողությունը խորհրդանշական ավանդույթ է, որին մասնակցում են ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչները, ներդրողները եւ հիմնական շահառուները:

Այս արարողությանը մասնակցեցին Lion Finance Group-ի, Ամերիաբանկի, Bank of Georgia-ի ղեկավար կազմը, ինչպես նաեւ Վրաստանի եւ Հայաստանի կառավարությունների անդամներ, այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը եւ այլ հյուրեր:

LFG-ի ընդգրկումը FTSE 100 ինդեքսում վկայում է խմբի երկարաժամկետ ռազմավարության եւ կայուն աճի նկատմամբ միջազգային ներդրողների մեծ վստահության մասին:

Այս կարեւոր իրադարձությունը խմբի եւ դրա անդամների համար նշանավորում է զարգացման նոր փուլ, որի հիմքում երկարաժամկետ ռազմավարական տեսլականն է եւ հաճախորդների համար արժեք ստեղծելու հանձնառությունը:

2006 թվականից Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված լինելով՝ LFG ֆինանսական խումբն ընդգրկվում է FTSE 100 ինդեքսում Ամերիաբանկի՝ խմբին միանալուց երկու տարի անց: Սա վկայում է Ամերիաբանկի՝ խմբում ընդգրկվելու ռազմավարական կարեւորության եւ խմբի ընդհանուր զարգացման համար բանկի նշանակալի դերի մասին:

Նշենք, որ այցի ընթացքում Ամերիաբանկի ու Bank of Georgia-ի ներկայացուցիչները հյուրընկալվել են նաեւ Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը, հանդիպել են արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ Վարուժան Ներսեսյանի հետ:

Lion Finance Group-ի մասին

Lion Finance Group-ը Լոնդոնի ֆոնդային բորսայում ցուցակված բանկային խումբ է, որը միավորում է տարածաշրջանի առաջատար, հաճախորդակենտրոն, թվային հնարավորություններով հագեցած ունիվերսալ բանկերը եւ գործում է իր հիմնական անդամների՝ Վրաստանում Bank of Georgia-ի եւ Հայաստանում՝ Ամերիաբանկի միջոցով:

Ամերիաբանկի մասին

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո Բանկը ներդնում եւ շարունակաբար կատարելագործում է շուկայում եզակի պրոդուկտներ, ծառայություններ եւ նորարարական հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները:

Ամերիաբանկը՝ որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

2 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ

ՇԱԿԻՐԱՆ ԲԵՄԱԴՐԵԼ Է ԴԱՐԻ ԱՆՎՃԱՐ ՇՈՒՆ

Շակիրան բեմադրել է հիանալի անվճար համերգ Ռիո դե Ժանեյրոյի լեգենդար Կոպակաբանա լողափում: Քաղաքային կառավարության տվյալներով՝ մոտ 2 միլիոն մարդ է մասնակցել՝ լողափը վերածելով վերջին տարիների ամենամեծ երաժշտական միջոցառումներից մեկի:

Շոուն նրա «Las Mujeres Ya No Lloran» (Կանայք այլեւս լաց չեն լինում) համաշխարհային շրջագայության մի մասն էր, որը կոչվել է նրա 2024 թվականի ալբոմի անունով:

Համերգը մեկ ժամից ավելի ուշացել է, բայց դա միայն ավելացրել է սպասումը: Երբ Շակիրան բեմ է բարձրացել ժամը 23:00-ի սահմաններում, հազարավոր մարդիկ նրան դիմավորել են խլացնող ծափահարություններով: Անօդաչու թռչող սարքերը թռչում էին լողափի վրայով՝ պորտուգալերեն գրելով «Ես սիրում եմ քեզ, Բրազիլիա» բառերը: Երգչուհին հուզիչ կերպով հիշել է իր առաջին ուղեւորությունը Բրազիլիա գրեթե 30 տարի առաջ, երբ նա ընդամենը 18 տարեկան էր: «Ես այստեղ եկա՝ երազելով քեզ համար երգելու մասին: Եւ հիմա նայեք դրան՝ կյանքը գեղեցիկ է եւ զարմանալի», - բեմից ասել է Շակիրան: Երեկոյի ընթացքում նա կատարել է իր ամենահայտնի հիթերը, այդ թվում՝ «Hips Don't Lie», «La Tortura» եւ «La Bicicleta», եւ ավարտել հզոր երգով, որը կապված էր Ժերար Պիկեի հետ բաժանումից հետո նրա անձնական պատմության հետ:

Կոպակաբանա լողափը լեփ-լեցուն էր. մարդիկ այդ առավոտյան արդեն սկսել էին զբաղեցնել իրենց տեղերը, իսկ երեկոյան ափը վերածվել էր միլիոնավոր երկրպագուների կենդանի ծովի: Քաղաքում տիրում էր կառնավալային մթնոլորտ. փողոցային վաճառողները վաճառում էին խմիչքներ, ուտելիք եւ նույնիսկ անհրաժեշտ իրեր՝ հանդիսատեսին օգնելու դիմանալ երկար սպասման օրվան:

Ռիոյի քաղաքապետ Էդուարդո Կավալեյրոն սոցիալական ցանցերում հայտարարել է, որ համերգը պատմական է. «Շակիրան պատմություն է կերտել Ռիոյում»

Քաղաքային պաշտոնյաները գնահատում են, որ միջոցառման տնտեսական ազդեցությունը կարող է հասնել մոտավորապես 155 միլիոն դոլարի՝ հաշվի առնելով զբոսաշրջիկների հոսքը, հյուրանոցների ամրագրումների աճը եւ այցելուների ծախսերը:

Մասնագետները նշում են, որ նման համերգներն արդեն դարձել են Ռիո դե Ժանեյրոյի մշակութային ռազմավարության մի մասը, որը նպատակ ունի գրավել զբոսաշրջիկներին եւ խթանել տնտեսությունը խոշոր սեզոնային տոների միջեւ ընկած ժամանակահատվածում:

Աշխարհի տարբեր ծայրերից երկրպագուներ ժամանեցին հատուկ շոուի համար, եւ ոմանք խոստովանեցին, որ միջոցառումը վաղեմի երազանքի իրականացում էր՝ տեսնել Շակիրային աշխարհի ամենահայտնի բացօթյա բեմերից մեկում:

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ՈՒԺԵՂ ԼԻՆԵԼ

Տիրանայում կայացած ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի հավաքականը թիմային դասակարգում 3-րդ տեղն է գրավել: Մրցաշարում բրոնզե մեդալակիրներ են դարձել Վազգեն Թեւանյանը, Արսեն Հարությունյանն ու Մանվել Խնձրցյանը: Թեեւ ըմբիշները ձեռնունայն չեն վերադարձել ԵԱ-ից, սակայն իրենց նվաճած մեդալներից այդքան էլ գոհ չեն:



Արսեն Հարությունյան

Վազգեն Թեւանյան

«Արդյունքից գոհ չեմ, քանի որ կարող էի չեմպիոն դառնալ: Բոլոր գոտեմարտերն էլ լավ եմ անցկացրել, մարզիչների հետ արդեն խոսել ենք ու քննարկել իմ սխալները:

Ամեն դեպքում փորձի պակասը զգացվեց: Կիսաեզրափակչում մրցավարի որոշումը բողոքարկելն ու վիճակ գցելն այդ պահին ճիշտ որոշում էր թվում, բայց գոտեմարտի ավարտին դեռ 3 րոպե կար ու պետք էր այդ հնարավորությունը պահել: Կորցրած միավորն ինձ չխանգարեց ու հաղթելու հնարավորություն ունեի, բայց չստացվեց:

Մենք սովորաբար մրցավարների որոշումները չենք բողոքարկում, միեւնույն է գիտենք, որ արդյունքը դրանից չի փոխվելու: Բայց հույսներս միայն մրցավարների վրա դնել չենք կարող, պետք է ավելի լավ պատրաստվել ու հավասար պայքար չծավալել: Պարտավոր ենք մրցակիցներից մի քանի անգամ ուժեղ լինել:

Հավաքականում բոլորս էլ մեծ ուժ ունենք եւ կարող ենք հետագայում մեծ նվաճումների հասնել»:

Ուգուեւի հետ գոտեմարտի առաջին 3 րոպեն շատ ազատ էի, գորգ մտնելիս լարվածությունը թուլացել էր ու կարողացա ինձ դրսեւորել: Հետո սկսեցի մտածել ինչպես հաղթել նրան, ինչից էլ օգտվեց, ու ես հնարքի տակից դուրս գալ չկարողացա:

Ես միշտ էլ ակտիվ կյանքով եմ ապրել: Սոցկայքերում ակտիվությունս պայմանավորված է ժամանակի թելադրանքով, եթե ցանկանում ես համաշխարհային լիգաներում հանդես գալ, պետք է այդ տիրույթում լինես: Բայց այդ ամենով զբաղվող թիմ ունեմ, եւ ինքս սոցկայքերում ամսական 3 ժամ էլ չեմ անցկացնում»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲՈԼՈՐՆ ԷԼ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆ

Հայաստանի հավաքականի եւ Ռուսաստանի չեմպիոն «Կրասնոդարի» ավագ, կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը մեկնաբանել է չեմպիոնական պայքարը Ռուսաստանի Պրեմիեր լիգայում:

«Մենք հիմա առաջատարն ենք առաջնությունում եւ արդեն հասել ենք գավաթի նախավերջին փուլին: Հույս ունեմ՝ կկարողանանք դուրս գալ սուպերեզրափակիչ եւ հաղթել, ինչպես նաեւ հաղթել առաջնության մնացած երկու հանդիպումներում:

«Կրասնոդարը» համախմբված թիմ է, որը մշտապես ցանկանում է հաղթել: Բոլոր տղաները համեստ են. մենք պարզապես անում ենք մեր գործը: Աշխատում ենք, մինչեւ վերջ պայքարում ենք յուրաքանչյուր խաղում: Անընդհատ աջակցում ենք միմյանց խաղադաշտում եւ հանդերձարանում: Թիմի բնավորությունը, կարգապահությունը օգնում են մեզ: Բոլորն էլ հասկանում են, թե ինչ հնարավորություն ունի թիմը տիտղոսների համար: Փորձում ենք, նույնիսկ, մանրուքներում ավելի լավը լինել, եւ դա օգնում է»,- Սպերցյանի խոսքը փոխանցում է Известия-ն:

Ընթացիկ մրցաշրջանում Սպերցյանը մասնակցել է 38 հանդիպման, դարձել 13 գոլի եւ 17 գոլային փոխանցման հեղինակ: «Կրասնոդարը» 63 միավորով գլխավորում է Ռուսաստանի առաջնության մրցաշարային աղյուսակը:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Գերմանիայի նորընծա չեմպիոն Մյունխենի «Բավարիան» հետաքրքրված է ՊՍԺ-ի վրացի եզրային հարձակվող Խվիչա Կվարացխելիայի կրտսեր եղբոր ծառայություններով, հաղորդում է Goal.com-ը:

16-ամյա եզրային հարձակվող Թոռնիկե Կվարացխելիան հանդես է գալիս Թբիլիսիի «Դինամոյի» երկրորդ թիմում: Մայիսի 2-ին նա առաջին անգամ հիմնական կազմում մասնակցել է Վրաստանի առաջնության հանդիպման: Թոռնիկե Կվարացխելիան Վրաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականի խաղացող է:

2018-ին «Բավարիան» ցանկացել էր ձեռք բերել նաեւ Խվիչա Կվարացխելիային, սակայն տրանսֆերը չէր կայացել:

Մայիսի 6-ին Խվիչա Կվարացխելիան ՊՍԺ-ի կազմում Մյունխենում կմասնակցի «Բավարիայի» դեմ Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչի պատասխան հանդիպմանը: Առաջին խաղում ՊՍԺ-ն հաղթել էր 5:4 հաշվով:

● *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 9-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Գայանե» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպե՞ս եմ ձեռք բերելու բժշկի՝ էլեկտրոնային դեղատոմսով նշանակած դեղը:

Ռուզաննա Վարդանյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ցանկացած դեղատուն պետք է միացված լինի «Արմեդ» համակարգում եւ ունենա հնարավորություն վաճառելու բոլոր տեսակի դեղատոմսերով դուրս գրվող դեղերը:

Քաղաքացիները կարող են մոտենալ ցանկացած դեղատուն, ներկայացնել անձը հաստատող որեւէ փաստաթուղթ՝

- անձնագիր, նույնականացման քարտ
- կամ հանրային ծառայության համարանիշ (սոցքարտ):

Դեղատան աշխատակիցը, մուտք գործելով համակարգ, տեսնում է բժշկի կողմից դուրս գրված էլեկտրոնային դեղատոմսը, դեղի անվանումը, քանակը, եւ բաց է թողնում համակարգից:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացին, ելնելով իր ֆինանսական միջոցներից, կարող է նաեւ բուժման ամբողջ կուրսի համար անհրաժեշտ քանակը ձեռք բերել մասնակի:

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ խմբերի են դասակարգվում քաղաքացիական ծառայության պաշտոնները:

Հասմիկ Հովհաննիսյան, 32 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոնները, ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց լուծման, ինչպես նաեւ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից, դասակարգվում են հետեւյալ խմբերի՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ եւ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ: Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի:

Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ավտոմեքենա վարելու իրավունքը կասեցված 19-ամյա երիտասարդը «Mercedes CLS»-ով Երեւանում խոշոր ավտովթարի հեղինակ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 5 + 9 + 14
Կոտայքի լեռներ	0 + 4 +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 8 +16 + 19
Գեղարքունիք	0 + 5 + 9 + 14
Լոռի	+ 4 + 8 + 11 + 15
Տավուշ	+ 5 + 8 +11 + 15
Արագածոտնի լեռներ	0 + 4 +10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 9 +15 + 20

Արարատ	+ 7 + 10 +18 + 21
Արմավիր	+ 7 + 10 + 19 + 22
Վայոց ձորի լեռներ	0 + 3 + 9 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 22
Սյունիքի լեռներ	0 + 3 + 9 + 12
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 7 + 14 + 18
Սյունիքի հովիտներ	+ 7 + 11 +20 + 24
Երեւան	+ 8 + 10 +19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **05.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*